# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2

## N 20/598 2014

### 13.11.2014թ. թիվ N 11/315-2014 պայմանագրի և 28.11.2014թ. թիվ N 11/350-2014 համաձայնագրի

«19» 12 2014թ. — ք. Երևան

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ.Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Փարսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի 8.4 կետի համաձայն Կողմերը համաձայնության են եկել 28.11.2014թ. թիվ N11/350-2014 համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1. Համաձայնագրի 1.1.1, 1.1.2. և 1.1.4. կետերը համարել ուժը կորցրած:

1.1.2. Պայմանագրում ավելացնել նոր 5.1.2 կետ հետևյալ խմբագրությամբ.

«5.1.2. Սույն պայմանագրի 5.1 կետում նշված ընդհանուր գնից 5%-ը՝ <u>2 874 348, 4 /երկու միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր քառասունութ դրամ, քառասուն լումա/</u> ՀՀ դրամը մինչև 25.12.2014թ. փոխանցվում է ՀՀ ֆինանսների նախարարության «900008000011 մրցույթային հայտերի և պայմանագրերի կատարման ապահովում» դեպոզիտային հաշվին, որը կվճարվի աշխատանքները կատարելուց հետո՝ Կապալառուի հաշվարկային հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցելու միջոցով»:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է թիվ 11/315-2014 պայմանագրի և թիվ 11/350-2014 համաձայնագրի անբաժանելի մասը:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 օրինակից, յուրաքանչյուր օրինակը 1 թերթից:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- |
| ՀՀ ԱԱ ծառայություն | **Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ** |
| ք.Երևան, Նալբանդյան104 | **ք. Կապան, Մ. Հարությունյան 1** |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՇԻԲ» ՓԲԸ Կապան մ/ճ |
| Հ/h 900011301067 | **Հ/h 2470800045720000** |
| ՀՎՀՀ 01507079 | **ՀՎՀՀ 09400653** |
| Տնօրենի տեղակալ | Տնօրեն |
| Ա. Հակոբյան | **Ռ. Փարսյան** |